ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1953 Общественные науки

Ա. Մելքոնյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Կոմունիստական փառապանծ պարտիայի անգամ Հովհաննես Սարուխանյանը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության ընդհատակյա շրջանի փայլուն պլեադայի ականավոր ներկայացուցիչներից է։

Նա իր կյանքն ամբողջությամբ նվիրաբերեց բանվոր դասակարգի ազատագրման մեծ գործին և հերոսաբար ընկավ ռևոլյուցիոն պայքարի առաջին գծի վրա։

Ավելի քան 32 տարի է անցել Հ. Սարուխանյանի հերոսական մահից, սակայն նրա մասին չկա ոչ մի ուսումնասիրություն։ Սույն հոդվածի նպատակն է մասամբ լրացնել այդ բացը։

* * *

Հովհաննես Սարգսի Սարուխանյանը ծնվել է 1882 թվականին, հին տոմարով օգոստոսի 24-ին, Երևանի նահանգի Նոր-Բայազետ քաղաքում, աշխատավորի ընտանիքում։

Նրա հայրը՝ Սարգիս Սարուխանյանը, չքավորության պատճառով հնարավորություն չի ունեցել Հովհաննեսին կրթության տալու։ Սարգսի մեծ որդին՝ Գևորգը, որը վաղուց հեռացել էր ընտանիքից և Ղազախի գավառի Դաղբյասման գյուղում աշխատում էր որպես ուսուցիչ, իր վրա է վերցնում փոքր եղբոր՝ Հովհաննեսի խնամքը։

Հովհաննեսը նախնական կրթությունն ստանում է Դաղբյասման գյուղի երկդասյան դպրոցում, որն ավարտում է 1895 թվականին և ընդունվում Նոր-Բայազետի քաղաքային ուսումնարանը։ 1897 թվականին նա ընդունվում է Երևանի Ուսուցչական սեմինարիան և ավարտում 1901 թվականին։

Այդ տարիներին՝ Անդրկովկասում մարքսիզմի գաղափարների տարածման գործում հայտնի դրական դեր էր խաղում վրացական առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության՝ «Մեսամե-դասի» խմբի ռևոլյուցիոն, մարքսիստական փոքրամասնությունը ընկեր Ստալինի գլխավորությամբ։

Երևանի Ուսուցչական սեմինարիայում պաշտոնավարում էին սոցիալ-դեմոկրատ ուսուցիչներ, որոնք այդտեղ էին եկել Ռուսաստանի ու Անդրկովկասի կենտրոնական շրջաններից և սեմինարիայի ուսանողության մեջ տարածում էին մարքսիզմը, մարքսիստական անլեգալ գրականությունը։

Սարուխանյանը նրանց միջոցով ձեռք է բերում մարքսիստական անլեգալ գրականություն և կլանված ուսումնասիրում դրանք։ Հենց սեմինարիայի ուսանողական նստարանից նա ընդմիշտ նվիրվում է բանվոր դասակարգի ազատագրման վեհ գործին։

Երևանի Ուսուցչական սեմինարիան փայլուն կերպով ավարտելուց հետո, Հ. Սարուխանյանը նշանակվում է ուսուցիչ Նոր-Բայազետի գավառի Բասարգեչարի շրջանի Մազրա գյուղում, որտեղ պաշտոնավարում է մինչև 1905 թվականը։

Այդ տարիներին Նոր-Բայազետի քաղաքային ուսումնարանում պաշտոնավարում էին սոցիալ-դեմոկրատ ուսուցիչներ (ինչպես բոլշևիկ Ի. Զեյվիլին, որը մահացել է 1906 թ.), որոնք Թիֆլիսից մարքսիստական անլեգալ գրականություն էին տեղափոխում Նոր-Բայազետ և զբաղվում մարքսիզմի պրոպագանդայով։ Հ. Սարուխանյանը սերտ կապ է պահպանում նրանց հետ։

1904 թվականի վերջերին, Հ. Սարուխանյանի գործոն մասնակցությամբ, Նոր-Բայազետում հիմնադրվում է ՌՍԴԲՊ խմբակ։ 1905 թվականի սեպտեմբերին նա ուսուցիչ է նշանակվում Նոր-Բայազետի քաղաքային ուսումնարանում և գլխավորում է սոցիալ-դեմոկրատական խմբակի աշխատանքները։ Նա կազմակերպական, քաղաքական եռանդուն աշխատանք է ծավալում Նոր-Բայազետի գավառի շատ գյուղերում Դալիղարդաշ (այժմ Սարուխան), Նորադուզ, Քյոսահ-մահմեդ (այժմ Բատիկյան), Ղուլալի(այժմ Կարմիր), Ելենովկա (այժմ Սևան) և այլն։ Շուտով ՌՍԴԲՊ Նոր-Բայազետի խմբի անդամների թիվը հասնում է 25—30-ի։ Այդ խմբակի մեջ ընդգրկվում են արհեստավորներ, ձկնորսներ, գյուղացիներ, հատկապես այն գյուղացիներից, որոնք Ռուսաստանի և Անդկովկասի կենտրոնական քաղաքներում բանվորության էին գնացել և այդ տեղերից սոցիալ-դեմոկրատական տրամադրությամբ տոգորված վերադարձել էին իրենց գյուղերը։

Բանվոր դասակարգի գործին անսահմանորեն նվիրված, եռանդուն ռևոլյուցիոներ Հ. Սարուխանյանը խմբի բոլշևիկ կազմակերպիչն ու ոգեշնչողն էր։ Այդ խմբի մասնակիցներից և հիմնադիրներից մեկը՝ Ա. Աբրահամյանը, Հ. Սարուխանյանին հետևյալ կերպ է հիշում ու բնութագրում՝ «Սարուխանյանի աշխույժ բնավորությունը, տրամաբանական, խելացի դատողությունները հենց սկզբի ծանոթությունից գերեցին ինձ։ Նա եռուն էներգիայով, խելացի ու անվախ մարդ էր, չէր վախենում ոչ մի վտանգից, պատրաստ էր մարտի նետվելու առաջին իսկ դեպքում։ Հ. Սարուխանյանն ուներ երիտասարդությանն իր շուրջը համախմբելու անսովոր ձիրք»[1]։

Ծանր էր հայ աշխատավորության դրությունը։ Նրան ճնշում էին ցարական չինովնիկները, տեղի կալվածատերերը, կուլակներն ու վաշխառուները։ Այդ բոլորին գումարվում էր արյունարբու դաշնակցության ճնշումը։ Գյուղացիները վրդովմունքով ասում էին. «Վճարիր տուրք ցարին, վճարիր տուրք դաշնակցությանը, որպեսզի երկուսն էլ պարանը պինդ ձգեն վզիդ»։

Հ. Սարուխանյանը իր շուրջն է համախմբում գավառի կենսունակ մարդկանց և ակտիվ կերպով պայքարում է ցարական ինքնակալության դեմ, դրա համար օգտագործելով ամեն մի հնարավորություն։

Այսպես, մի անգամ, երբ Նոր-Բայազետի քաղաքային ուսումնարանի ուսուցչությունը և բարձր խմբերի աշակերտությունը էքսկուրսիա են գնում Գեղարդ, այնտեղ Սարուխանյանը հանդես է գալիս ընդարձակ, կրակոտ ճառով և նկարագրելով աշխատավորության ծանր վիճակը, կոչ է անում

---

[1] Տես ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, Հ. Սարուխանյանի գործ։

երիտասարդությանը համախմբվել և պայքար մղել տիրող կարգերի տապալման համար։ Նա իր ճառը վերջացնում է՝ կեցցե ռևոլյուցիան, կորչի ցարական կառավարությունը, կեցցե սոցիալիզմը բացականչություններով։

Հ. Սարուխանյանի այս ճառը հայտնի է դառնում ցարական իշխանության օրգաններին։ Այդ ժամանակվանից Սարուխանյանը ճանաչվում է ցարական ռեժիմի համար վտանգավոր անձնավորություն և հետապնդվում է, սակայն նա անվախ ու համարձակ ծավալում է քաղաքական-մասսայական աշխատանք, ամրացնում է սոցիալ-դեմոկրատական խումբը։

Ելնելով ՌՍԴԲՊ Տամմերֆորսի կոնֆերանսի որոշումից, Նոր-Բայազետի սոցիալ-դեմոկրատական խումբն ակտիվ բոյկոտ է հայտարարում Պետական 1-ին Դումային, կազմակերպում է Սևանի ձկնորսների գործադուլ, որը վեր է ածվում բողոքի ցույցի՝ ընդդեմ ցարական ինքնակալության։

1906 թվականին Հ. Սարուխանյանը փորձում է ընդունվել Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը, սակայն, որպես ռևոլյուցիոն շարժման մասնակից նրան մերժում են։ Նա հարկադրված էքստերն քննություն է տալիս և 1907 թվականի հունիսին ստանում է Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտի ավարտման ատեստատ, վերադառնում է Նոր-Բայազետ ու ամբողջովին նվիրվում պարտիական աշխատանքի։

1905—1907 թթ. ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակավոր պարտությունը մազաչափ անգամ չընկճեց Սարուխանյանի ռևոլյուցիոն հաստատակամությունը։ Նա շարունակեց գավառի առաջավոր երիտասարդներին ընդգրկել սոցիալ-դեմոկրատիայի շարքերը։ 1907 թ. վերջին սոցիալ-դեմոկրատական խմբի մեջ մտան Բատիկ Բատիկյանը, Վանո Սիրունյանը և ուրիշները, որոնք կանգնեցին բոլշևիկյան պլատֆորմի վրա։ Ռևոլյուցիոն անսպառ եռանդի տեր Բ. Բատիկյանի մտնելը խմբակի մեջ խոշոր չափով ամրապնդեց բոլշևիկների դիրքը խմբակում։ Ստեղծելով բոլշևիկյան ամուր կորիզ, Հ. Սարուխանյանը մենշևիկներից սահմանազատվելու հաստատուն գիծ տարավ։

Ռեակցիայի տարիներին մենշևիկները բռնեցին բացահայտ լիկվիդատորական գիծ։ Հ. Սարուխանյանն ամբողջովին սահմանազատվեց մենշևիկներից և 1908 թվականին Բատիկ Բատիկյանի և մյուս բոլշևիկների հետ միասին կազմակերպեց առանձին բոլշևիկյան խմբակ։

Ստոլիպինյան ռեակցիայի տարիների տեռորը մոլեգնում էր ամբողջ թափով։ Ցարական ժանդարմերիան կրնկակոխ հետապնդում էր նաև Նոր-Բայազետի բոլշևիկներին, որոնցից Վարազդատ Պողոսյանը հեռացվում է ուսուցչական ասպարեզից, ձերբակալվում և տարվում Թիֆլիս և 1910 թ. հունվարին տանջամահ է լինում Մետեխի բանտում։

Հովհաննես Սարուխանյանը խիստ հսկողության տակ, Նոր-Բայազետից տեղափոխվում է (փաստորեն արտաքսվում) Իգդիր։

1910 թվականի սեպտեմբերից Սարուխանյանը աշխատում է Իգդիրի քաղաքային ուսումնարանում, որպես ուսուցիչ։ Այստեղ նույնպես, նա շարունակում է պարտիական եռանդուն աշխատանքը։ Իգդիրում 1904—1905 թվականներին կազմակերպվել էր սոցիալ-դեմոկրատական խմբակ, որն ակտիվ ռևոլյուցիոն գործունեություն էր ունեցել 1905—1907 թթ. ռևոլյուցիայի տարիներին, սակայն, 1908—1909 թվականներից՝ նրա անդամների

մեծ մասի արտաքսվելու, կամ աշխատանքով այլ տեղ փոխադրվելու պատճառով, խմբակը համարյա դադարել էր գործելուց։ Հ. Սարուխանյանը ձեռնամուխ է լինում Իգդիրի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան խմբակի վերականգնման աշխատանքին։ Նոր խմբակի մեջ են մտնում Հ. Սարուխանյանը, Բ. Ղարիբջանյանը, Գառնիկ Ղալաչյանը, Ամասիա Հարությունյանը[1] և ուրիշները։ Խմբակը Հ. Սարուխանյանի գլխավորությամբ ագիտացիոն-պրոպագանդիստական եռանդուն աշխատանք է կատարում ցարական ինքնակալության և տեղի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, հատկապես հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցության դեմ։

1911 թ. հուլիսի 18-ին, Հ. Սարուխանյանին Իգդիրից տեղափոխում են Կաղզվան, որտեղ աշխատում է որպես ուսուցիչ։

Նա չթուլացող եռանդով պարտիական-կազմակերպական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք է տանում Կաղզվանում։ 1911 թ. վերջերին նրա գլխավորությամբ սոցիալ-դեմոկրատական խմբակ է կազմակերպվում Կաղզվանում։ Խմբակի մեջ մտնում են Հ. Սարուխանյանը, Արսեն Մուսայելյանը (սպանվել է քաղաքացիական կռիվներում 1918 թ. Հյուսիսային Կովկասում), և ուրիշները[2]։

Մի քանի տարի Կաղզվանում աշխատելուց հետո, 1915 թ. սեպտեմբերին Հ. Սարուխանյանին տեղափոխում են Կարս դարձյալ ուսուցչի պաշտոնով։

Կարսում նույնպես սոցիալ-դեմոկրատական խմբակ էր կազմակերպվել դեռևս 1903—1904 թթ., որը 1905—1907 թթ. ռևոլյուցիայի տարիներին ակտիվ ռևոլյուցիոն պայքար ծավալելով, ռեակցիայի տարիներին թուլացել էր։

Խմբակի անդամներից շատերը ցարական կառավարության կողմից ձերբակալվել կամ աքսորվել էին։ Հ. Սարուխանյանը ՌՍԴԲՊ-ի Թիֆլիսի խմբի ցուցումներով ձեռնամուխ է լինում Կարսի սոցիալ-դեմոկրատական խմբակի վերականգնման աշխատանքներին։

Նա միաժամանակ ագիտացիոն-պրոպագանդիսաական մեծ աշխատանք է կատարում Կարսի աշխատավորության մեջ և զորամասերում, սպայական մի քանի խմբերի հետ պարապում է հանրակրթական առարկաներ (մաթեմատիկա, ռուսաց լեզու)։ Օգտագործելով այդ հնարավորությունը, նա սերտ կապ է հաստատում զինվորների հետ, պարզաբանում է զինվորներին պատերազմի իմպերիալիստական բնույթը, մասսայականացնում է զինվորների շրջանում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգը, բացատրելով, որ աշխատավորները, զինվորական շինել հագած բանվորներն ու գյուղացիները, պետք է զենքն ուղղեն իրենց երկրի բուրժուազիայի դեմ, տապալեն նրա իշխանությունը, այն ժամանակ միայն հնարավոր կլինի ձեռք բերել արդարացի հաշտություն։

[1] Գ. Ղալաչյանը և Ա. Հարությունյանը սպանվել են 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ժամանակ էջմիածնում, դաշնակների դեմ մղած կռվում։ Թաղված են ճեմարանի բակում։ Նրանց շիրիմների վրա Սովետական իշխանությունը կոթող է կանգնեցրել։

[2] Տես ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գործ № 9, թերթ 7։

[3] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում պահպանվել են ՌՍԴԲՊ-ի Կարսի խմբակի 1905—1907 թթ. գրած բոցաշունչ մարտական կոչերից՝ ուղղված ցարական ինքնակալության դեմ (տես ֆ. 39, գ. 10)։

Հ. Սարուխանյանը Կարսում կազմակերպում է զինվորական սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան խմբակ։

Կոմունիստական պարտիան նախապատրաստեց աշխատավորությանը ապստամբության համար, գլխավորեց նրա ռևոլյուցիոն պայքարը, 1917 թ. փետրվարին տապալվեց ցարիզմը։

«Ռուսաստանի բանվորներն ու բոլշևիկների պարտիան աշխարհում առաջինը եղան, որ հաջողությամբ օգտագործեցին կապիտալիզմի թուլությունը, ճեղքեցին իմպերիալիզմի ճակատը, տապալեցին ցարին»[1]։ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակից հետո, բոլշևիկյան պարտիան դուրս եկավ ընդհատակից։

Լույս տեսան Լենինի Ապրիլյան թեզիսները, որոնք տվին «բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից սոցիալիստական ռևոլյուցիային անցնելու համար, ռևոլյուցիայի առաջին էտապից երկրորդ էտապին՝ սոցիալիստական էտապին անցնելու համար պարտիայի մղելիք պայքարի հանճարեղ պլանը»[2]։

Նոր լիցք, ճիշտ կողմնորոշում ստանալով, Հ. Սարուխանյանն անսպառ եռանդով ու անզուսպ էնտուզիազմով պայքարում է լենինյան հանճարեղ պլանի կենսագործման համար։ Նա գլխավորում է Կարսի բոլշևիկների պայքարը «Ամբողջ իշխանությունը Սովետներին» լենինյան-ստալինյան լոզունգի կենսագործման համար, բանվորներից, զինվորներից ու քաղաքի աշխատավորներից նորանոր անդամներ է գրավում բոլշևիկյան կազմակերպության շարքերը։

Շնորհիվ զորքի մեջ տարվող կազմակերպական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի՝ Կարսի զորամասերի զինվորների ճնշող մեծամասնությունը հանդես է գալիս ընդդեմ բուրժուական ժամանակավոր կառավարության, ի պաշտպանություն բոլշևիկների պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ Լենինի։

Հուլիսյան դեմոնստրացիայի արյունոտ ճնշումից հետո, երբ ժամանակավոր կառավարությունն սկսեց խելահեղ հալածանք բոլշևիկների ու նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի դեմ, Կարսի զորամասերում տեղի ունեցան զինվորների մասսայական բողոքի միտինգներ, որոնք իրենց ընդունած բանաձևերում պահանջում էին պաշտպան կանգնել բոլշևիկների պարտիային և նրա առաջնորդ Լենինին։ Կարսի զորամասերի զինվորների միտինգներից մեկի ընդունած բանաձևում ասված է.

«Ընկերնե՛ր, պաշտպանեցեք Ս. Դ. Բոլշևիկների պարտիային»։

«Կեցցե՛ն բոլշևիկները և մեծ մարտիկ ընկեր Լենինը»[3]։

Հ. Սարուխանյանը Կովկասյան բոլշևիկյան բյուրոյի ցուցումով, սերտ կապ է պահպանում Ալեքսանդրոպոլի ու Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպությունների, նրանց ղեկավարներ՝ Պ. Արվելաձեի, Բ. Ղարիբջանյանի և Ս. Ալավերդյանի հետ։ Նա միաժամանակ նամակագրությամբ կապ է պահպանում Նոր-Բայազետի բոլշևիկյան կազմակերպության հետ, որին գլխավորում էր անձնուրաց բոլշևիկ Բատիկ Բատիկյանը։ Հ. Սարուխանյանը 1917 թ. սկզբներին Բ. Բատիկյանին գրած նամակում պահանջում է բոլշևիկյան կազ-

---

[1] «ՀԱՄԿ(բ)Պ պատմություն», համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 243։

[2] Նույն տեղում, էջ 249։

[3] Տես „Кавказский рабочий", № 94, 6 հուլիսի, 1917։

մակերպության շարքերում չթողնել ոչ մի մենշևիկ և անխնա պայքար մղել պրոլետարիատի այդ դավաճանների դեմ, որոնք Նոր-Բայազետի Սովետում և Դումայում համաձայնողական-դավաճանական գիծ էին վարում։

1917 թվականի հուլիսյան դեմոնստրացիայի ճնշումից հետո, ռևոլյուցիայի խաղաղ զարգացման հնարավորությունները վերացան, վրա հասավ գոտեմարտերի ու բռնկումների շրջանը։

Պարտիայի 6-րդ համագումարը (1917 թ. հուլիսի 26-ից օգոստոսի 3-ը) դիրեկտիվ տվեց ամբողջ պարտիային՝ նախապատրաստվել այդ գոտեմարտերին։ Նա «պարտիայի նպատակակետը դարձրեց զինված ապստամբությունը, սոցիալիստական ռևոլյուցիան»[1]։

Պարտիայի Կենտկոմի դիրեկտիվներից ելնելով Անդրկովկասի բոլշևիկներն ամբողջ Ռուսաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հետ միասին նախապատրաստվեցին զինված ապստամբության։ 1917 թ. հոկտեմբերի 2—7-ը Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որն իր որոշումների հիմքում դրեց պարտիայի 6-րդ համագումարի դիրեկտիվները՝ զինված ապստամբության մասին։

Լենինի և Ստալինի ղեկավարությամբ՝ Ռուսաստանի կենտրոնում, մարդկության պատմության մեջ նոր դարաշրջան կազմող Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան հաղթանակեց։ Ամբողջ աշխատավորությունը անսահման ցնծությամբ դիմավորեց փրկարար մեծ ռևոլյուցիայի հաղթանակի լուրը։ Կարսում տեղի ունեցան աշխատավոր բնակչության և զինվորների բազմամարդ միտինգներ։ Այդ միտինգներն իրենց ընդունած բանաձևերում ողջունեցին Պետերբուրգի պրոլետարիատին ու կայազորի զինվորներին, որոնք բոլշևիկների ղեկավարությամբ տապալեցին բուրժուազիայի տիրապետությունը և նվաճեցին պրոլետարիատի դիկտատուրան։ Կարսի բերդային հրետանու 15-րդ վաշտի երկու օր տևող ժողովի բանաձևում ասված է.

«Կարսի բերդային հրետանու 15-րդ վաշտի ընդհանուր ժողովը 1917 թ. նոյեմբերի 1-ին և 2-ին բազմակողմանիորեն քննության առավ Պետերբուրգի խոշորագույն անցքերը, այն է՝ որ տեղի է ունեցել բոլշևիկների ղեկավարությամբ ապստամբություն՝ Ռոձյանկոների, Կոռնիլովների, Պուտիշկևիչների և Կերենսկիների կոնտրռևոլյուցիոն լագերի դեմ... վաշտի ժողովը ողջունում է Պետերբուրգյան կայազորին, որն առաջինը հնչեցրեց իր հզոր ձայնը կապիտալիստների իշխանության դեմ»[2]։

Նման բանաձևեր ընդունվեցին Կարսի բանվորների, զինվորների և քաղաքի աշխատավորության շատ ժողովների ու միտինգների կողմից։

1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատ, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան սեյմը, որոնք վրացական, հայկական և ադրբեջանական «ազգային խորհուրդների» հետ միասին կոնտրռևոլյուցիոն բլոկ կազմած սկզբում գերմանո-թյուրքական, ապա անգլո-ամերիկյան իմպերիալիստների թելադրանքով ու աջակցությամբ Անդրկովկասն անջատեցին Սովետական Ռուսաստանից։ «Գլխավոր շարիքն այն է,— գրում է այդ մասին Ս. Շահումյանը,— որ «Անդրկովկասն այս պատմական և պատասխա-

[1] «Համկ(բ)Պ պատմություն», համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 269։
[2] Տես „Кавказский рабочий", № 201, 16 նոյեմբերի, 1917։

նատու մոմենտին... անջատվել է ռևոլյուցիոն Ռուսաստանից... Անդրկովկասյան իշխանությունն իր քաղաքականությամբ ուղղակի աջակցություն է ցույց տալիս Կալեդինին և բառացի իմաստով դանակ է խրում ռևոլյուցիայի թիկունքը, դավաճանություն է կատարում Ռուսաստանյան պրոլետարիատի, զինվորների և գյուղացիների նկատմամբ»[1]։

Հ. Սարուխանյանը գլխավորում է Կարսի զինվորների և քաղաքի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարը՝ «Ռևոլյուցիայի թիկունքը» դանակ խրող Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն իշխանության դեմ։ Նրա գլխավորությամբ տեղի ունեցած զինվորների ու աշխատավորության բազմաթիվ միտինգներն ու ժողովները պահանջում են, որ Անդրկովկասը միանա Սովետական Ռուսաստանին, Անդրկովկասում սովետական կարգեր հաստատվեն։

1918 թ. ապրիլին՝ թյուրքական իմպերիալիստների Կարս ներխուժելուց հետո, Հ. Սարուխանյանը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի հանձնարարությամբ՝ պարտիական կազմակերպչական-պրոպագանդիստական ծավալուն աշխատանք է տանում։ Իր բազմաթիվ հրապարակային դասախոսություններում Սարուխանյանը Թիֆլիսի աշխատավորության առաջ մերկացնում է Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն պարտիաներին՝ դաշնակներին, մենշևիկներին ու մուսավաթիստներին, որպես իմպերիալիզմի ստոր գործակալների և կոչ է անում աշխատավորությանը՝ վճռական պայքարի դիմել Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու համար։

Անդրկովկասի Սեյմի լիկվիդացումից հետո, 1918 թ. մայիսին, երբ ստեղծվեցին Վրաստանում՝ մենշևիկյան, Ադրբեջանում՝ մուսավաթիստական, Հայաստանում՝ դաշնակցական մարիոնետային կառավարություններ, Հ. Սարուխանյանը պայքար ծավալեց վրաց մենշևիկյան կոնտրռևոլյուցիոն կառավարության դեմ, որը սկսեց կրնկակոխ հետապնդել Հ. Սարուխանյանին։

1919 թ. հունվարին պարտիական մի գաղտնի ժողովում զեկուցելու ժամանակ, մենշևիկյան կառավարությունը ձերբակալում է նրան, նետում բանտ, և 5 ամիս բանտում պահելուց հետո արտաքսում Վրաստանից։

Նույն թվականի հունիսին, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի հանձնարարությամբ Սարուխանյանն անցնում է Ալեքսանդրոպոլ և Սարիղամիշ տեղի բոլշևիկյան կազմակերպությունները վերականգնելու և ամրապնդելու համար, որոնք քայքայվել էին թյուրքական իմպերիալիստների՝ այդ քաղաքները ներխուժելու ժամանակաշրջանում, ապա տեղափոխվում է Կարս, որտեղ երկու ամիս աշխատում է Կարսի Պետական դպրոցների շրջանային տեսչի պաշտոնում։ Դաշնակցական կառավարությունը տեսնելով Հ. Սարուխանյանի ռևոլյուցիոն գործունեությունը, նրան այդ շրջանից հեռացնելու նպատակով նշանակում է Դարալագյազի շրջանի տարրական դպրոցի տեսուչ[2]։

1919 թվականի հոկտեմբերի սկզբին, Սարուխանյանը թողնում է Կարսը, բայց չի ենթարկվում դաշնակցական «կառավարության» այդ որոշմանը, չի

---

[1] Ա. Շահումյան. Ընտիր երկեր, Երևան, 1946, էջ 302։

[2] Հ. Սարուխանյանին Դարալագյազում, ինչպես և Մազրայում, Նոր-Բայազետում, Իգդիրում, Կաղզվանում, Կարսում ուսուցիչ նշանակվելու մասին փաստաթղթերը և ավարտական ատեստատներն ու վկայականները, տես Հայկական ՍՍՌ ՊԿԱ քաղվածքների բաժին, գործ 3 77, տես նաև „Кавказский календарь", 1913, էջ 297—298 և 1914, էջ 315։

գնում Դարալագյազ, այլ գնում է Նոր-Բայազետ և այնտեղ շարունակում է պարտիական-կազմակերպական խոշոր աշխատանք տանել։

Մինչև Հ. Սարուխանյանի Նոր-Բայազետ գալը, գավառի պարտիական աշխատանքը գլխավորում էր Բատիկ Բատիկյանը, որի ջանքերով Նոր-Բայազետ քաղաքում և գավառի շատ գյուղերում ստեղծվել էին բոլշևիկյան սկզբնական կազմակերպություններ (կոմբջիջներ), որոնք լայն մասսայական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք էին տանում գավառի աշխատավորության մեջ, ընդդեմ դաշնակցական «կառավարության»՝ հանուն սովետական կարգերի հաստատման Հայաստանում։

Բ. Բատիկյանի և Հ. Սարուխանյանի միատեղ գործունեությունն է՛լ ավելի է ուժեղացնում պարտիական-մասսայական աշխատանքն ամբողջ գավառում։

Հ. Սարուխանյանը այնտեղ աշխատում է որպես շրջանային դպրոցների տեսչի օգնական։ Օգտագործելով իր պաշտոնը, նա շրջում է գավառի շրջաններն ու գյուղերը, տանում է լայն մասսայական պարտիական-կազմակերպական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք։ Նա ջանում է գավառի բոլոր գյուղերում ստեղծել կոմբջիջներ և բոլոր գյուղերն ապահովել կոմունիստ աշխատողներով։ Պարտիական ընկերներից նա ուսուցիչներ է նշանակում և ուղարկում է այն գյուղերը, որտեղ դեռ կոմբջիջներ չկային և նրանց միջոցով նոր մարդիկ է գրավում կոմունիստական պարտիայի շարքերը։

Այնտեղ նա եռանդուն պայքար է ծավալում հայ ժողովրդի ոխերիմ թշնամու դաշնակցության ու նրա «կառավարության» դեմ։

Իր հրապարակային ելույթներում նա խիզախորեն մերկացնում է դաշնակցական պարտիային և նրա մարիոնետային «կառավարությանը», որպես իմպերիալիզմի անարգ գործակալի և կոմունիստական ճշմարտացի խոսքը հասցնում է աշխատավորությանը։

Մի առիթով, երբ Երևանից ուղարկված դաշնակցական լիդերներից մեկը, մտրակի ուժով հավաքված բալմության առաջ Նոր-Բայազետի դպրոցում զեկուցում է դաշնակցության գործունեության մասին, չարաշահելով սոցիալիզմի անունը, Հ. Սարուխանյանը գիտական ու պատմական հարուստ փաստերով մերկացնում ու խայտառակության սյունին է գամում դաշնակցական պարագլխին։

— Մարդիկ,— ասում է Հ. Սարուխանյանը,— որոնք իրենց իմպերիալիստ տերերի թելադրանքով Անդրկովկասը և Հայաստանը անջատեցին Սովետական Ռուսաստանից, մարդիկ, որոնք իշխանության գլուխ բարձրացան հայ ժողովրդի դարավոր թշնամի տաճկական իմպերիալիստների միջոցով, կառավարության ղեկավարներ օծվեցին տաճկական կեղտոտ փաշաների կեղտոտ ձեռքերով, և այսօր հանուն մի բուռը իմպերիալիստների շահերի, հայ ժողովրդին անդունդի եզրին են հասցրել, երկիրը դարձրել են իմպերիալիստական պետությունների գաղութ, կոտորում են թուրք (ադրբեջանական) անմեղ, անզեն աշխատավորությանը Հայաստանում, լկտիություն ունեն սոցիալիզմի անունից հանդես գալու[1]։

[1] Հ. Սարուխանյանի այս ելույթի մասին տես Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, Հ. Սարուխանյանի ֆոնդ, ընկ. Ա. Մանվելյանի հիշողություններ։

Հ. Սարուխանյանի և Բ. Բատիկյանի ծավալած պարտիական մասսայական եռանդուն աշխատանքի շնորհիվ, աճում ու ամրապնդվում է կոմունիստական կազմակերպությունը Նոր-Բայազետի ամբողջ գավառում։

Իր հերթին դաշնակցական «կառավարությունն» ուժեղացնում է հետապնդումներն ու հալածանքները կոմունիստների նկատմամբ։

1919 թ. սեպտեմբերին, Հայաստանում տեղական բոլշևիկյան կազմակերպությունների աճման ու ամրապնդման հողի վրա, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի ցուցումով, Ա. Մռավյանի, Ս. Ալավերդյանի, Ղ. Ղուկասյանի գլխավորությամբ Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների անլեգալ խորհրդակցություն, որտեղ ընտրվեց ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտե, որը գլխավորեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պայքարը՝ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի և նրա ստոր գործակալ դաշնակցական «կառավարության» դեմ, հանուն սովետական կարգերի հաստատման Հայաստանում։ Կոմիտեի ստեղծումը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի գավառների պարտիական կազմակերպությունների ամրապնդման, աճման, պայքարող ուժերի կոորդինացման համար։

1919 թվականի դեկտեմբերի վերջերին, Հ. Սարուխանյանի և Բ. Բատիկյանի գլխավորությամբ, հրավիրվում է Նոր-Բայազետի գավառի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանս (անլեգալ), որտեղ լսվում են զեկուցումներ գավառի պարտիական կազմակերպության անելիքների, Հայաստանի Կոմունիստական պարտիայի կոնֆերանսին դելեգատների ընտրության և այլ հարցերի մասին։

Գավառի պարտիական կազմակերպությունների անելիքների մասին զեկուցում է Հովհ. Սարուխանյանը. Հայաստանի Կոմ.(բ) կոնֆերանսի դելեգատներ են ընտրվում Հ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը և ուրիշները (5 հոգի)։

1920 թվականի հունվարի սկզբին Հ. Սարուխանյանը և Բ. Բատիկյանը մեկնում են Երևան և մասնակցում Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի առաջին կոնֆերանսին։ Հ. Սարուխանյանը կոնֆերանսում զեկուցում է Նոր-Բայազետի պարտիական կազմակերպության դրության ու աշխատանքների մասին։

1920 թվականի սկզբներին, դաշնակցական «կառավարությունը» որոշում է Բասարդեչարում և Ղարանլուղում (Մարտունիում) եղած զորամասերն ուղարկել Ջիվանշիրի շրջանը (Ադրբեջան)՝ ադրբեջանական գյուղերի վրա հարձակվելու համար։ Հ. Սարուխանյանի և Բ. Բատիկյանի գլխավորությամբ պարտիական կազմակերպության կողմից զորքի մեջ կատարած քաղաքական-մասսայական, բացատրական աշխատանքների շնորհիվ այդ զորամասերը հրաժարվում են ադրբեջանական գյուղերի վրա հարձակվելուց։

Դաշնակցական կառավարությունն հետապնդում է Հ. Սարուխանյանին և ձերբակալում նրան, մի քանի շաբաթ բանտում պահելուց հետո, 1920 թ. մարտին արտաքսում Նոր-Բայազետի գավառից։ Այնուհետև Սարուխանյանը տեղափոխվում է Երևան և Արմենկոմի հանձնարարությամբ ընդհատակյա պարտիական աշխատանք կատարում Երևանում։

Իրականացնելով ստալինյան ստրատեգիական հանճարեղ պլանը, հերոսական Կարմիր Բանակը ջախջախեց ինտերվենտների և ներքին կոնտրռևոլյու-

ցիոն ուժերին, մտավ Հյուսիսային Կովկաս և 1920 թ. սկզբներին մոտեցավ Անդրկովկասի սահմաններին։ Այս հանգամանքը խոշոր չափով խթանեց Անդրկովկասի աշխատավորության ռևոլյուցիոն եռանդի բարձրացմանը, որը ռևոլյուցիոն պայքարի դրոշ պարզեց հանուն Անդրկովկասի ազատագրման։

Ադրբեջանի աշխատավորները՝ բոլշևիկյան պարտիայի ու Բաքվի պրոլետարիատի գլխավորությամբ առաջինը Անդրկովկասում ռևոլյուցիոն պայքարի դրոշ բարձրացրին և 1920 թ. ապրիլի 28-ին Կարմիր Բանակի օգնությամբ տապալեցին մուսավաթիստական կառավարության անարդ լուծը և Ադրբեջանում սովետական կարգեր հաստատեցին։

Հայաստանի աշխատավորությունը ոգեշնչված եղբայրական Ադրբեջանի աշխատավորության հաղթանակով, նոր, ավելի բուռն եռանդով ռևոլյուցիոն պայքար ծավալեց դաշնակցական «կառավարության» դեմ՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։ 1920 թ. մայիսի 1-ին, միջազգային պրոլետարիատի նվիրական տոնի օրը, Հայաստանի բոլոր քաղաքներում և շատ շրջաններում տեղի ունեցան աշխատավորության մասսայական ցույցեր ու միտինգներ։ «Կորչի դաշնակցությունը», «Կեցցե Սովետական իշխանությունը» լոզունգները համակեցին աշխատավորական լայն մասսաներին, ահ ու սարսափի մեջ գցելով դաշնակցական կառավարությանը։ Ալեքսանդրոպոլում, այն ժամանակվա Հայաստանի պրոլետարական կենտրոնում, որտեղ ուժեղ էր բոլշևիկների ազդեցությունը, բանվորների, զինվորների ու քաղաքի աշխատավորության մեջ, մայիսյան ցույցերը վերածվեցին զինված ապստամբության։ Մայիսի 10-ին, ապստամբները Ալեքսանդրոպոլում բոլշևիկների ղեկավարությամբ գրավեցին իշխանությունը։ Մայիսի 10—30-ը, տարբեր ժամանակներում ապստամբություններ տեղի ունեցան Կարսում, Սարիղամիշում, Քավթառլուի շրջանում, Ղազախ-Շամշադինում, Նոր-Բայազետում և Զանգեզուրում։ Նոր-Բայազետի գավառում զինված ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու համար Արմենկոմը ուղարկեց Հովհաննես Սարուխանյանին, որտեղ դաշնակցական «կառավարության» դեմ գյուղացիական հուզումները և ակտիվ ելույթները սկսվել էին նախքան մայիսյան ապստամբությունը։

1920 թվականի ապրիլին Դալիղարդաշ գյուղի աշխատավորները տեղի կոմբջիջի ղեկավարությամբ ապստամբվեցին և ամբողջովին ոչնչացրին դաշնակցական խմբապետ Շբոյի՝ մոտ 60 մարդուց բաղկացած զինված բանդային, որին դաշնակցական «կառավարությունը» ուղարկել էր գյուղացիներից հարկեր հավաքելու համար։ Դաշնակցական «կառավարությունը» թնդանոթներով զինված զորք ուղարկեց Դալիղարդաշ (Սարուխան) գյուղի վրա։ Դալիղարդաշի գյուղացիներին օգնության հասան՝ Քյոսամահմադ (Բատիկյան), Քյուզաջուղ, Ղուլայի և մյուս գյուղերը։ Դաշնակցական «կառավարությունը» վախեցած ետ տարավ իր զորքերին։ Հ. Սարուխանյանը, հաշվի առնելով գյուղացիների և զինվորների ռևոլյուցիոն տրամադրությունները, ձեռնամուխ եղավ Նոր-Բայազետի գավառում զինված ապստամբության կազմակերպման գործին։ Նա մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը հրավիրում է Նոր-Բայազետի բոլշևիկյան կազմակերպության գաղտնի ժողով, որտեղ լսվում է Սարուխանյանի զեկուցումը, քննության առնվում զինված ապստամբության կազմակերպման հարցը։ Պարտիական ժողովը գտնելով, որ գավառում զինված ապստամբության համար պայմանները միանգամայն հասունացել են, որո-

շում է կազմակերպել զինված ապստամբություն, տապալել դաշնակների իշխանությունը և մյուս գավառների ապստամբ բանվորների և գյուղացիների հետ միասին Հայաստանում հաստատել սովետական կարգեր։ Որոշվում է ապստամբությունն սկսել Ղարանլուղից (Մարտունուց)։ Հ. Սարուխանյանը պարտիականների մի մասին թողնում է Նոր-Բայազետում՝ Ղարանլուղից հարձակվելու ժամանակ դաշնակներին թիկունքից խփելու համար, իսկ մյուս մասի հետ ուղևորվում Ղարանլուղ, որտեղ հասնելուն պես հրավիրում է տեղի պարտիականների ժողով, որին մասնակցում են Ղարանլուղի և Բասարգեչարի շրջանների ու զորամասի պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Այդ ժողովում զինված ապստամբությունը ղեկավարելու համար կազմվում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե՝ Հ. Սարուխանյանի նախագահությամբ։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն իր ներկայացուցիչներից և պարտիականներից մի քանի հոգու բոլշևիկ Սուրեն Մակարյանի[1] գլխավորությամբ ուղարկում է Բասարգեչար՝ շրջանի աշխատավորությանը և խմբապետ Համազասպի զորամասի զինվորներին կազմակերպելու և ապստամբությանը մասնակից դարձնելու համար։ Նրանց հաջողվում է Բասարգեչարում եղած զորամասից մոտ երկու վաշտ Մարտունի բերել և մասնակից դարձնել զինված ապստամբությանը։

Մայիսի 13-ին Ղարանլուղում (Մարտունիում) սկսվում է ապստամբությունը, տապալվում է դաշնակների իշխանությունը և այնտեղ հաստատվում Սովետական իշխանություն։

Ապստամբության գլխավոր ուժերն էին գեներալ Սիլիկովի զորամասի 2-րդ հետևակային գումարտակի (որը վերակազմված էր որպես 3-րդ ռազմամիլիցիոներական գունդ), և Բասարգեչարից Մարտունի եկած զինվորները՝ զինվորական շինել հագած բանվորներր, գյուղացիներն ու Ղարանլուզի շրջանի գյուղացիությունը։

Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն ձերբակալեց գեներալ Սիլիկովին այն պահին, երբ նա սարսափած փախել էր փոստ-հեռագրատուն և հեռախոսափողը վերցրած Նոր-Բայազետից օգնություն էր աղերսում։

Նոր-Բայազետի իշխանությունը ամեն միջոցի դիմում է ապստամբությունը ճնշելու համար. ձերբակալում է կոմունիստներից շատերին և աքսորում Սևանի կղզին (մայիսի 14-ին), հավաքագրում է Նոր-Բայազետի կոնտրռևոլյուցիոն ուժերին՝ պոլիցիայի ստրաժնիկների անձնակազմին, պահակային վաշտին (караульная рота), դաշնակցական միլիցիային, դաշնակ մաուզերիստներից ու կուլակներից կազմված ջոկատներին և նախապատրաստվում է գիմադրելու Ղարանլուղից (Մարտունուց) Հ. Սարուխանյանի գլխավորությամբ Նոր-Բայազետի վրա արշավող ապստամբ զինվորներին ու գյուղացիներին։

Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն Ղարանլուղում ձերբակալում է դաշնակցական ղեկավարներին, բռնագրավում պետական ու ռազմական պահեստները, տեղում ստեղծում Սովետական իշխանության օրգաններ։ Պարտիականների և կինվորների մի մասին թողնում է Մարտունիում՝ կոնտրռևոլյուցիոն հնարավոր ելույթները ճնշելու համար, իսկ մնացած մասով արշավում է Նոր-Բայազետի վրա։

---

1 Սուրեն Մակարյանը սպանվել է 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ժամանակ՝ դաշնակների դեմ մղված կռվում։

Մայիսի 15-ին ցերեկվա ժամը 3-ին, Հ. Սարուխանյանը 6 վաշտ զինվորների ու ապստամբ գյուղացիների գլուխն անցած՝ Ն. Ագիաման, Ռյոլ, Երանոս, Քյուզաջուղ, Դալիղարդաշ, Ղուլալի և Փաշաքյանդ գյուղերի վրայով, սրշավում է Նոր-Բայազետի վրա։ Գյուղացիները մեծ խանդավառությամբ են դիմավորում ապստամբներին։

Հ. Սարուխանյանը գյուղերում միտինգներ է գումարում, կրակոտ ճառերով հանդես է գալիս գյուղացիների առաջ, նրանց պարզաբանում է Սովետական իշխանության նշանակությունը, դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանում Սովետական իշխանության հաստատման անհրաժեշտությունը։ Գյուղերում ստեղծվում են Հեղկոմներ։ Ճանապարհին ապրստամբների զորագունդը գնալով մեծանում է։ Նրանց միանում են աշխատավոր գյուղացիների նորանոր զինված ջոկատներ։ Մինչև Նոր-Բայազետ հասնելը ապստամբների թիվը հասնում է մոտավորապես 1.800 զինված մարդու։

Նոր-Բայազետի տակ դաշնակները 2—3 ժամ կատաղորեն դիմադրելուց հետո, ապստամբների ուժեղ հարվածների տակ հարկադրված, անձնատուր են լինում։ 1920 թ. մայիսի 17-ին, ցերեկվա ժամը 5-ին, ապստամբ զինվորներն ու գյուղացիները Հ. Սարուխանյանի գլխավորությամբ գրավում են Նոր-Բայազետ քաղաքը և ամբողջ գավառում հայտարարում Սովետական իշխանություն։

Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն ձերբակալում է տեղի դաշնակցական պետական և պարտիական գործիչներին, բռնագրավում է բանկը, փոստ-հեռագրատունը, պահեստները։

Բատիկ Բատիկյանը, որն այն ժամանակ ծանր հիվանդ պառկած էր անկողնում, իր խորհուրդներով ու գործնական առաջարկություններով ակտիվ կերպով օժանդակում է ապստամբներին։ Քաղաքը գրավելուց հետո, Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն, իմանալով, որ գեներալ Խանկալամովն իր զորամասով գալիս է Նոր-Բայազետի վրա, ապստամբ զինվորներին ու գյուղացիներին անմիջապես դուրս է բերում քաղաքից և վեց կիլոմետր հեռավորության վրա՝ «Բուրդակոյուն» և «Սալանոց» կոչվող դաշտավայրում դիրքեր է բռնում և պատրաստվում է մարտն ընդունելու։

1920 թ. մայիսի 19-ի առավոտյան գեներալ Խանկալամովի զորամասը հրացաններով, գնդացիրներով ու թնդանոթներով լավ զինված, հարձակվում է Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի զորամասի դիրքերի վրա։ Սկսվում է կատաղի մարտը, որը տևում է ամբողջ օրը։ Ապստամբ զինվորներն ու գյուղացիները անօրինակ հերոսությամբ են կռվում դաշնակների դեմ։ Խանկալամովի զորամասի շարքային զինվորների ճնշող մեծամասնության համակրանքը ապրստամբների կողմն էր։ Նրանցից մի մասը ապստամբների վրա կրակելու փոխարեն կրակում է օդի մեջ։ Մարտի ընթացքը ցույց է տալիս, որ հաղթանակի հեռանկարը ապստամբների կողմն է, բայց Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի շտաբի մեջ սողոսկած դաշնակցական ծպտված սպաների (Եղշատյան, Սրո) քայքայիչ աշխատանքի հետևանքով՝ ուժերի գերակշռությունն անցնում է թշնամու կողմը։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի շտաբի պետ՝ ծպտված թշնամի Հայկ Գրիգորյանը և մի քանի այլ ծպտված դաշնակ սպաներ, սկսում են իրենց խլուրդային աշխատանքն ապստամբների շարքերում։ Նրանք կեղծ լուրեր են տարածում թշնամու կարծեցյալ հզորության մասին, հրամայում են զինվորնե-

րին չդիմադրել, և կովի վճռական պահին անցնում են թշնամու կողմը, սկսում են կռվել ապստամբ զինվորների և գյուղացիների դեմ։ Գնալով ապստամբների ուժերն սկսում են նվազել։

Հ. Սարուխանյանը դիրքից-դիրք անցնելով քաջալերում է ապստամբ զինվորներին ու գյուղացիներին և պահանջում է մինչև վերջին կաթիլ արյունը կռվել։

Երեկոյան հակառակորդը աջ թևից հրետանային ուժեղ կրակ է բացում և ստիպում է ապստամբներին նահանջել։ Ձախ թևից կոմունիստական ջոկատը՝ Սուրեն Մակարյանի ղեկավարությամբ, արիությամբ դիմադրում է մինչև ուշ գիշեր, որից հետո հակառակորդի ուժեղ ճնշման տակ քաշվում է լեռները։

Հ. Սարուխանյանը՝ կտրված աջ և ձախ թևերից, ռազմաճակատի կենտրոնում իր տրամադրության տակ մնացած փոքրաթիվ ջոկատով, շարունակում է հերոսաբար դիմադրել։

Չնայած ստեղծված բացահայտ ծանր դրությանը, Հ. Սարուխանյանը քաջալերում է ապստամբ գյուղացիներին ու զինվորներին, հորդորում նրանց՝ կռվել մինչև վերջին կաթիլ արյունը, մեռնել կռվի դաշտում, ռևոլյուցիայի դրոշը չարատավորել փախուստով։ Բոլոր ուժերը կորցնելուց, վերջին փամփուշտը կրակելուց հետո միայն Հ. Սարուխանյանը անցնում է Փաշաքյանդ գյուղը, որտեղից մատնությամբ ընկնում է դաշնակցական մաուզերիստների ձեռքը։

Դժվար է նկարագրել դաշնակցական մաուզերիստների գործադրած անլուր տառապանքներն ու բարբարոսական խոշտանգումները՝ Հովհաննես Սարուխանյանի, այդ անձնուրաց ու անձնվեր բոլշևիկի, կոմունիստական պարտիայի ու հայ ժողովրդի արժանավոր զավակի նկատմամբ։

Ականատեսները պատմում են, թե ինչպես դաշնակցական մաուզերիստների ամբողջ մի ոհմակ Հ. Սարուխանյանին երկու ձիերի մեջտեղ առած և երկու ձեռքերից ամուր բռնած, ձիերն արագ քշում էին և ստիպում, որ ձիերի հետ վազի։ Այդպես ծեծելով, գլխի մազերը քաշելով, մաուզերիստները Հ. Սարուխանյանին Փաշաքյանդից բերում են Նոր-Բայազետ։

Նոր-Բայազետի փողոցներում նորից խոշտանգում են Սարուխանյանին։ Բարբարոսական խոշտանգումների հետևանքով կոտրվում են նրա ձեռքն ու ոտքը, որից հետո քայլելու անկարող քաշ են տալիս փողոցի սալահատակների վրա և այդպես արնաշաղաղ, կիսակենդան վիճակում նետում Նոր-Բայազետի խոնավ բանտը։

Դաշնակները տակն ու վրա են անում Հ. Սարուխանյանի բնակարանը (Նոր-Բայազետում), թալանում են նրա տնային իրերը, ամբողջությամբ ոչնչացնում են նրա անձնական գրադարանն ու ձեռագրերը[1]։

---

[1] Հ. Սարուխանյանն ունեցել է անձնական հարուստ գրադարան, որի մեծ մասը եղել է մարքսիստական, ապա գեղարվեստական ու մասնագիտական գրականություն։ Հ. Սարուխանյանն Իգդիրում, Կաղզվանում, Կարսում, Թիֆլիսում, Նոր-Բայազետում և Երևանում բազմիցս հանդես է եկել հրապարակային զեկուցումներով ու դասախոսություններով։ Նրա կարդացած այդ բազմաթիվ դասախոսությունների ու զեկուցումների կոնսպեկտներն ու թեզիսները, ինչպես և անձնական արխիվն ու գրադարանը դաշնակներն ամբողջությամբ ոչնչացրին, այդ պատճառով նրանից ոչինչ չի մնացել։

3—4 օր Նոր-Բայազետի բանտում պահելուց և շարունակ խոշտանգելուց հետո, դաշնակցական մաուզերիստներն ու խմբապետները 1920 թ. մայիսի 23-ի լույս 24-ի գիշերը Սարուխանյանին դուրս են բերում Նոր-Բայազետ քաղաքից և 7—8 կիլոմետր հեռավորության վրա, Այրիվանքի մոտ «Ազատ» կոչվող ամայի դաշտում անասելի խոշտանգումների ենթարկելուց հետո՝ գնդակահարում են։

Գնդակահարությունից առաջ դաշնակները թուղթ ու մատիտ են տալիս Հ. Սարուխանյանին և առաջարկում են գրել, որ նա հրաժարվում է բոլշևիզմից, որպեսզի խնայեն նրա կյանքը, սպառնալով կախել նրան։

Հ. Սարուխանյանը բոլշևիկին հատուկ արիությամբ պատասխանում է դաշնակ դահիճներին.

«Կճոնվեմ կախաղանի վրա, բայց ռեոլյուցիային չեմ դավաճանի։ Դուք անընդունակ եք հասկանալու, որ բնության մեջ գոյություն չունի ոչ մի ուժ, որ մեզ, բոլշևիկներիս կարողանա նման բան գրել տալու»։

Երբ գազազած դաշնակ մաուզերիստները հրացանների ու ատրճանակների փողերն ուղղում են դեպի նա կրակելու, Հ. Սարուխանյանը հպարտ ու խրոխտ բացականչում է.

«Կեցցե՞ բոլշևիկների պարտիան։ Կեցցե՞ Սովետական Հայաստանը։ Կեցցե՞ Լենինը»։

Այս խոսքերը շուրթերին ընկնում է անվեհեր բոլշևիկը։ Դաշնակները ծանր, հիվանդ վիճակում անկողնուց հանում և տանում ու գնդակահարում են նաև Բատիկ Բատիկյանին (1920 թ. սեպտեմբերին)։

Հայ ժողովրդի արժանավոր զավակներ՝ Ս. Ալավերդյանի, Ս. Մուսայելյանի, Բ. Ղարիբջանյանի, Ղ. Ղուկասյանի, Հ. Սարուխանյանի, Բ. Բատիկյանի, Ա. Փանյանի և շատերի առատորեն թափված արյունն ապարդյուն չանցավ։

Հայաստանի աշխատավորությունը Մայիսյան ապստամբության պարտությունից անհրաժեշտ դաս առավ, նա պատրաստվեց նոր գոտեմարտերի, և չանցած վեց ամիս, կոմունիստների պարտիայի ղեկավարությամբ, Կարմիր Բանակի և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ տապալեց անգլո-ամերիկյան իմպերիալիստների գործակալ դաշնակների արյունոտ լուծը ու Հայաստանում հաստատեց սովետական կարգեր։

Հայ ժողովուրդը Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ այժմ կերտում է իր երջանիկ կյանքը, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում, նրանց հետ միասին կառուցում է կոմունիզմի հոյակապ շենքը։

Մեր պարտիան, Սովետական իշխանությունը և սովետական ժողովուրդը ըստ արժանվույն գնահատում են աշխատավորության ազատագրման գործի համար զոհված մարտիկների հիշատակը, այդ թվում նաև հերոս մարտիկ Հովհաննես Սարուխանյանի հիշատակը։ Կա Սարուխանյանի անվան գյուղ (Նոր-Բայազետի շրջանի նախկին Դալիզարդաշ գյուղը կոչվում է Սարուխան)։ Նոր-Բայազետում կան Սարուխանյանի անվան փողոց, հրապարակ, որտեղ կանգնեցված է նրա արձանը։ Կա Հ. Սարուխանյանի անվան դպրոց։

Հ. Սարուխանյանի հերոսական կյանքն ու ռևոլյուցիոն գործունեությունը ողջունող օրինակ է։ Նրա պայծառ հիշատակը ընդմիշտ կապրի սերունդների սրտերում։